Փետր. 18-ին հիմնուեց Հայաստանի Կարմիր Խաչը, որի կանոնադրութիւնը հաստատուեց Խորհրդարանում մարտ 19-ին: Կենտրոնական վարչութեան անդամներ ընտրուեցին Գր. Զալիսուչեանը (նախագահ), բժ. Յ. Տէր Դաւթեանը, բժ. Ս. Կամսարականը, բժ. Յ. Մելիքեանը, տիկ. Օ. Արարատեանը, բժ. տիկ. Զալեան-Մանուկեանը, տիկ. Քալանթարեանը, բժ. Ա. Տէր-Պողոսեանը, Վ. Բաբայեանը, Ա. Մակարեանը: Կարմիր Խաչը ճիւղեր ունեցաւ Կարսում, Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Աշտարակում, Զալալ-Օղլիում, Ղարաքիլիսայում և Իգդիրում: Նրան յարեցին և Թիֆլիսի, Պոլսի, Փարիզի և Ամերիկայի Հայ Կարմիր Խաչերը: Կարմիր Խաչի գլխաւոր գործն էր՝ օգնութիւն հասցնել բանակին: Դրա համար նա կազմակերպեց 2 հիւանդանոց՝ ողջ սարքով, մի թռուցիկ խումբ, մի սննդատու կայան զինուորների համար, բաղնիք, լւացարան և այլն: Կարմիր Խաչի մենաշնորհն էր խաղաթուղթը. յունիսից սկսած կառավարութիւնը տուրք դրեց երկաթուղու տոմսակների վրա էլ յօգուտ Կարմիր Խաչի և 4 միլիոն ռուբլու վարկ բացեց:

Այսպէս, կեանքի բոլոր ասպարէզներում, դրութիւնը բարելաւում էր դղալապէս: Ապրուստի պայմաններն էլ հետզհետէ դառնում էին աւելի տանելի. հակառակ որ ժողովուրդը ազահութեամբ ցանում էր ունեցած հացահատիկները, հացն ու կենսական միջոցները անհամեմատ աւելի առատ էին, քան 1919 թ-ին: Գաղափար տալու համար ապրուստի պայմանների մասին՝ առաջ բերենք մի քանի թուեր. փետրուար 7-ին Երևանի շուկայում մթերքները արժէին. հացը՝ 26—28 ռուբլի փունտը, միսը՝ 70—140ռ., ալիւրը՝ 1400ռ. փութը, ցորենը՝ 1300ռ., գարին՝ 1300ռ., բրինձը՝ 1400—1800ռ., լոբին՝ 35ռ. փունտը, սխտորը՝ 30ռ., սոխը՝ 12ռ., կաղամբը՝ 8ռ., բազուկը՝ 7ռ., գազարը՝ 8ռ., մածունը՝ 30ռ., կաթը՝ 25ռ., պանիրը՝ 60-100ռ., կարագը՝ 180-200ռ., մեղրը՝ 170-180ռ., գետնախնձորը՝ 15ռ., ընկոյզը՝ 40ռ., չամիչը՝ 80—90ռ., նաւթը՝ 40ռ., սապոնը՝ 30ռ., հաւկիթը՝ 13—14ռ. հատը, լուցկին՝ 8—10ռ. տուփը,, փայտածուխը՝ 110ռ. փութը, փայտը՝ 70ռ. փութը: Ապր. 15-ին կօօպերատիւներում տղամարդկանց կօշիկները արժէին 3000ռ. զոյգը, կանանց՝ 4000ռ., երեխաների՝ 1200ռ., կրկնակօշիկները՝ 1300ռ., թէյի բաժակները՝ 120ռ. հատը, ափսէներ թէյի՝ 120ռ. հատը, մոմ՝ 320ռ. փունտը, սուրճ՝ 360ռ., երեսսրբիչներ՝ 160ռ. հատը, ծխախոտի թուղթ՝ 6ռ. դրքոյկը, լուցկի՝ 5ռ. տուփը, սապոն՝ 50ռ. փունտը:

Իսկ դրամը մարտ 1-ին՝ 1 ղոլարը արժէր 580 ռուբլի, 1 թիւրքական ոսկին՝ 3000ռ., 1 փունտ ստերլինգը՝ 2000ռ.:

Պաշտօնեաների ռոճիկներն էին՝ վարչապետի՝ 8,150ռ. ամսական, նախարարների՝ 7,450ռ., Խորհրդարանի անդամների՝ 6,800ռ, Սենատի նախագահի՝ 8,150ռ., անդամների՝ 7,450ռ., չրջանային դատարանի անդամների՝ 6,600ռ., հաշտարար դատաւորների՝ 6,600ռ.: 40 կարգի ռոճիկ դոյութիւն ունէր — նուազագոյնը 2000ռ., բարձրագոյնը՝ 8,150ռ.: